

27.09.2020 22:16



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը,

**հաշվի առնելով** Արցախի Հանրապետությունում ադրբեջանական կողմի ռազմական ագրեսիան, որի թիրախում են հայտնվել նաև խաղաղ բնակավայրերը, այդ թվում՝ մայրաքաղաք Ստեփանակերտը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վրա գինված հարձակման և Հայաստանի Հանրապետության տարածք ներխուժելու անմիջական վտանգը, դրանով պայմանավորված ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» 2020 սեպտեմբերի 27-ի թիվ 1586-Ն որոշումը,

**կարևորելով** Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության ժողովուրդների անվտանգությունը, առանց որի չի կարող ապահովվել մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանությունը,

**արձանագրելով, որ** Ադրբեջանի քաղաքական դեկավարության կողմից հայերի և Հայաստանի Հանրապետության դեմ էթնիկ ատելություն հրահրող հայտարարությունները և գործողությունները խախտում են ոչ միայն միջազգային պայմանագրերով սահմանված պարտավորությունները, այդ թվում՝ Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին Կոնվենցիայի 2-րդ հոդվածով սահմանված պարտավորությունները, այլ նաև Ադրբեջանի ազգային օրենսդրության պահանջները («ցեղասպանության իրականացման հրահրում» (Ադրբեջանի քրեական օրենսգրքի 104-րդ հոդված) և «ագրեսիվ պատերազմ ծրագրելը, նախապատրաստելը, սանձազերծելը կամ վարելը» (Ադրբեջանի քրեական օրենսգրքի 100-րդ հոդված)):

**նկատի ունենալով այն**, որ փաստաբանները նույնպես կամավորական խմբեր կազմելու նախաձեռնությամբ են հանդես եկել,

1. **Խստագույնս դատապարտում է** Ադրբեջանի ռազմաքաղաքական դեկավարության ագրեսիան Արցախի Հանրապետության նկատմամբ.
2. **Զևավորում է աշխատանքային խումբ՝** միջազգային կառույցներում Ադրբեջանի ագրեսիայից տուժած խաղաղ բնակչության իրավունքների պաշտպանությանն օժանդակելու նպատակով.
3. **Զևավորում է օժանդակող փաստաբանական**

**խմբեր`** կամավորական կամ զորահավաքային կարգով ռազմական գործողություններում ներգրավված փաստաբանների փոխարեն նրանց մասնագիտական աշխատանքներին աջակցելու նպատակով.

4. **Տեղեկացնում է հանրությանը**, որ քաղաքացիական գործերով դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե՝ պատասխանողը ռազմական դրության մեջ գտնվող զինված ուժերի կազմում է, կամ ռազմական դրության մեջ գտնվող զինված ուժերի կազմում գտնվող հայցվորը դիմել է համապատասխան միջնորդությանը:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```